«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԵՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ԱՌԱՐԿԱ՝ մայրենի

ՀԵՂԻՆԱԿ՝ Մելինե Բաբլումյան

ՄԱՐԶ՝ Լոռի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ստեփանավանի թիվ 1 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն—----------3

Գորշծական աշխատանքների կազմակերպումը ուսուցման գործընթացում—----------5

Եզրակացություն—---------- 17

Գրականության ցանկ—---------- 19

Ներածություն

Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է: Ուստի աշակերտներին պետք է հասկանալի դարձնել այն, որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Պրակտիկայում առաջադրված խնդիրներն են, որ լուծվում են տարբեր գիտությունների միջոցով: Աշակերտին պետք է հասկանալի դարձնել տեսական հասկացությունների իմացության կարևորությունն ու նշանակությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ: Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը: Աշակերտների մեջ նման կարողության առկայությունը նրանց իսկ կրթվածության որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է լինելու ողջ կյանքում: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է,որ ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս հիմնական շեշտը դնի նաև աշակերտների գործնական կարողությունների ձևավորման և զարգացման հարցերի վրա: Հենց այս տեսանկյունից է, որ արժեվորվում է գործնական աշխատանքի դերը ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորության: Կոնկրետ խնդիրներով ու բովանդակությամբ պայմանավորված, գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս:

Գործնական աշխատանքների կազմակերպումը ուսուցման գործընթացում

Գործնական անվանում են սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.
1. Ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ
2.Մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ
3.Նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովումը ողղված հմտությունների զարգացմանը:

Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը: Որպես մանկավարժական երևույթ գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է, այսինքն այն ինչ պետք է անի աշակերտը, մյուս կողմից այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության հիշողության, մտածողության, ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որն աշակերտին տալիս է միանգամայն նոր, նախկինում նրան անծանոթ գիտելիքներ, կամ էլ արդեն ունեցած գիտելիքների խորացում:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջներին համաձայն մայրենիից նախատեսվում են տարբեր բնույթի ու տեսակի գործնական աշխատանքներ:
1.Պատմության գծապատկերների կազմում նախադասությունների համար գունային բաժանումնորով
2.Բառերի, վանկերի կազմության գծապատկերներ
3.դասանյութի մասերին համապատասխան բովանդակային կառուցվածքի գծակարգ
4.Տեքստի սխալների ուղղում, խառնված հերթականության շտկում
5.Գործնական գրություններ նամակ, հասցե, հայտարարություն
6.Գովազդային վահանակ, դասարանական թերթ ստեղծելու և ձևավորելու աշխատանքներ
7.Տեքստի նկարազարդում
8.Հեքիաթների հորինում
9.Զանազան տեղեկատվական աղբյուրներից որոնել, գտնել տեղեկություններ առաջադրված հարցերին պատասխանելու համար:Երեխան պետք է դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը:
10.Ճանաչողական /երևակայություն, ընկալում, հիշողություն/, մտածական /համեմատում, վերլուծություն/ գործընթացների զարգացում:

Գործնական աշխատանքը կրում է սոսկ ոսուցանող բնույթ:Հիմնականում նպատակաուղղված է երևակայության, ստեղծագործական մտածողության դիտարկման, հարցեր տալու կաողությունների զարգացմանը, որն էլ իր հերթին նպաստում է գործնական կարոությունների զարգացմանը:
Վարժությունների մի խումբ նպաստում են սեփական կարծիքը փոխելու, իրերն ու երևույթները տարբեր տեսանկյուններից դիտարկելու կարողությունների զարգացմանը, ինչն էլ իր հերթին գործնական աշխատաքն արդյունավետ հնարավորություն է ընձեռում:
Առաջին դասարանից սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել հետազոտական գործունեության հետևյալ ձևերին.

- մտածել ինքնուրույն
- հարցնել մեկ ուրիշից
- կարդալ գրքերում
- դիտել հեռուստացույց
- տեղեկություն ստանալ համացանցից
- դիտարկումներ կատարել
- փորձեր կատարել
- հարցնել համապատասղան մասնագետներին

Գործնական աշխատանքը ենթադրում էայնպիսի աշխատանք, որի կատարման ընթացքում աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում, որտեղ անհրաժեշտ է ստեղծագործական մոտեցում իր առջև դված խնդիրը լուծելու համար:
Գործնական աշխատանքները պետք է կազմված լինեն այնիսի առաջադրանքներից, որոնք հնարավոր չէ կատարել առանց ուսումնական նյութի լավ իմացության:
Գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում յուրացված գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառումն է:
Գործնական աշխատանքը ենթադրում է նախաձեռնություն ցուցաբերելու կարողություն և հմտություն, ոչ ստանդարտ մտածողություն, ստեղծագործական

մտածողություն,ինքնուրույն որոշում կայացնելու, անհրաժեշտ տեղեկատվություն որոնելու պատասխանատվություն:
Գործնական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.
1. ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա նպատակ
2.գործնական աշխատանքի ժամանակ երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց գիտելիքներն ու կարողությունները
3.յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը և պետք է յուրացնի ինքնուրույն գործելու հնարքները
4.գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին
5.գործնական աշխատանքի ընթաղցքում ստացված արդյունքները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում
6.գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնի
7.գործնկան աշխատանքը պետք է ապահովի սովորողի ճանաչողական, տրամաբանական կարողությունների զարգացումը
8. գործնական աշխաանքի բոլոր տեսակները պետ է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործողություն ծավալելու կարողությունը:

Տիկնիկների զարմանահրաշ աշխարհում

Այս թեմայի շուրջ մենք մտովի կտեղափոխվենք տիկնիկների զարմանահրաշ աշխարհ, որտեղ կկատարենք հետաքրքրաշարժ առաջադրանքներ, որոնք մեզ կառաջադրվեն: Կազմվել է հետաքրքիր հարցաթերթիկ, ինչի արդյունքների հիման վրա էլ ստեղծվեց այս գեղեցիկ գործնական աշխատանքը: Հարցաթերթիկին պատասխանել են 2-րդ դասարանի աշակերտները:
1. Հիշո՞ւմ եք ձեր առաջին տիկնիկը,
2. Խաղում ե՞ք տիկնիկներով հիմա,
3. Ի՞նչ տիկնիկներ եք նախընտրում,
4. Ի՞նչ եք կարծում խաղալիքները ձեզ խանգարում են, թե՞ օգնում ուսման մեջ:

Մենք կբաժանվենք չորս խմբի. դրանք են հետազոտողներ, հետաքրքրասերներ, ստեղծագործողներ և մասնագետներ:

Ստեղծման պատմություն

Տիկնիկները մարդկային կյանք մտել են հազարամյակներ առաջ և դարձել նրա անբաժանելի մասը: Այն իրականացրել և շարունակում է իրականացնել տարբեր գործառույթներ. ծիսական, կրթական, պաշտամունքի, գեղարվեստական և նույնիսկ բուժիչ:

Ամենատարեց տիկնիկը, որին գտել են ժամանակակից Չեխիայի տարածքում, 35 հազար տարեկան է:
Տիկնիկներ են հայտնաբերվել նաև Եգիպտոսի դամբարաններում և Հունաստանի տարածքում հնագիտական պեղումների ժամանակ: Եգիպտական տիկնիկները շարժուն ձեռքեր, ոտքեր և բնական մազեր ունեին:

18-րդ դարում Ֆրանսիացիները ճենապակուց տիկնիկներ պատրաստեցին, որը հանրաճանաչության գործում իսկական հեղափոխություն դարձավ:

1881 թվականին Փարիզում հայտնի իմպրոսիոնիստ Էդգար Դեգան առաջին անգամ ներկայացրեց մոմից պատրաստված <<Փոքրիկ պարողը>> քանդակը:

17-րդ դարում Ֆրանսիացիները սկսեցին պատրաստել <<Պանդորաներ>> կամ նորաձևության տիկնիկներ:Նրանց ժամանակակից զգեստներ էին հագցնում և ուղարկում Եվրոպայի տարբեր քաղաքներ;

Հատկանշական է, որ պատերազմի ժամանակ <<Պանդորայով>> արկղերը տեղափոխելիս դադարեցվում էր պատերազմական գործողությունները, որպեսզի ոչ մի տիկնիկ չվնասվի:

Տիկնիկ

Տիկնիկը մարդու, թռչունների, կենդանիների կերպարանքով իր է, որը պատրաստվում է տարբեր նյութերից. փայտ, մետաղ, գործվածք, բուրդ, թել, խմոր: Տիկնիկները հիմնականում լինում են ծիսական, թատերական և մանկական: Ծիսական տիկնիկի առաջացումը կապված է ծիսակատարությունների հետ, որոնք ստեղծվել են հավատալիքային, կրոնական և առասպելական տարբեր կերպարների պատկերներով և օգտագործվել են հմայելու, կախարդելու նպատակով: Ծիսական տիկնիկներն են սկզբնավորել տիկնիկային թատրոնները:

Մանկական խաղալիքները երեխաների համար ծառայում են որպես զբաղմունքի և ժամանցի առարկա, կատարելով դաստիարակության դեր:

Հետաքրքրասերների խումբ

Այս խմբի անդամները շատ հետաքրքրասեր են և սիրում են հետաքրքրվել զանազան տիկնիկներով: Հետաքրքրության շնորհիվ նրանք իմացան, որ գոյություն ունեն տիկնիկների տարբեր տեսակներ

1. Կերպարային
2. Ուսուցողական
3. Թատերական
4. Պարահանդեսային
5. Զվարճալի
6. Խելացի
7. Ծիսական

Այս խմբում տրվում են այսպիսի հարցեր. գրել ո՞րն է ձեր ամենասիրելի տիկնիկը, ինչպե՞ս է այն ձեզ մոտ հայտնվել, Ինչո՞ւ է այն քեզ համար շատ սիրելի:

Իմ սիրելի տիկնիկը

Իմ սիրած տիկնիկը իմ ռուսական տիկնիկն է: Իմ տիկնիկը հայրիկս բերել է Ռուսաստանից:Նրա անունը Անժելա է: Իմ տիկնիկը շրթներկ ունի: երբ ես գալիս եմ դպրոց, կարոտում եմ նրան: Ես նրա հետ խաղում եմ ազատ ժամանակ և նրան պահում եմ իմ տիկնիկների մեջ:

Նանե 2-րդ դասարան

Հետազոտողների խումբ

Հետազոտողների խմբի անդամները սիրում են հետաքրքրվել անցյալով: Նրանք գտել են թանգարաններ, որտեղ պահպանվում են հին տիկնիկները: Այդ թանգարաններում ամեն տարի ավելանում են ցուցանմուշներ, որպեսզի շատ տարիներ անց երեխաները իմանան, թե ինչ տիկնիկերով են խաղացել իրենց ծնողները:

Թատրոն-թանգարաններ

Ամենահին տիկնիկային թատրոն- թանգարանը հայտնաբերվել է Եգիպտոսում 1904 թվականին, որը թվագրվում է մ.թ.ա. 6-րդ դարին: Այնուհետև տիկնիկային թատրոնի ակունքները նկատվում են Հնդկաստանում: Այնտեղ ևս դրանք կրում էին կրոնական բնույթ: Դրանք փայտից պատրաստված մեխանիկական տիկնիկներ էին: Ըստ ուսումնասիրողների 11-րդ դարում Հնդկաստանում ներկայացումներն արդեն տաճարներից տեղափոխվել էին թատերական հրապարակ, որտեղ տիկնիկները թելերի օգնությամբ խաղացվել են ստեղծելով շարժման տպավորություն:

Հայկական ծիսական տիկնիկներ

Հայկական մշակույթի ամենագեղեցիկ, խորհրդանշական արժեքներից են հայոց ծիսական տիկնիկները: Ժողովուրդը օժտել է մոգական ուժով, չարը խափանող, վտանգից ու չարից զերծ պահող հատկություններով: Տիկնիկների միջոցով ձգտել են ապահովել բերք ու բարիքի առատությունը, ընտանեկան և անձնական հարաբերությունները:

Հայկական տիկնիկներից մեզ հայտնի են.
<<Ալկատիզ>>- մեծ պահքի 7 շաբաթները

<<Արուս>>-Համբարձման տոն,
<<Ուտիս տատ>> և << Պաս պապ>>- Բարեկենդան
Ամենահայտնի հայկական տիկնիկը կոչվում էր <<Նուրի>> կամ <<Անձրևի հարս>>: Այն երաշտի ժամանակ գյուղացու միակ հույսն էր: Հայուհիները մինչև նոր տարի խմորից փոքրիկ տիկնիկներ էին պատրաստում, որոնք կոչվում էին <<Ասիլիկ-Վասիլիկ>>:Դրանցով հնում գուշակություններ էին անում:

Հայաստանում կան բազմաթիվ թատրոն-թանգարաններ: Օրինակ Լուսիկ Ագուլենցու թանգարանում պահվում են զանազան ծիսական տիկնիկներ:

Փամբակի << հեքիաթի տուն>> թատրոն-թանգարան

Բարբի տիկնիկ

Բարբի տիկնիկը մանկական խաղալիք է, որով հիմնականում խաղում են 3-14տ. աղջիկները:Ծուկայում հայտնվել է 1959թ. Ամերիկայում: Տիկնիկը մշակել է Էլիոթ Հանդլերը:Նրա խոսքերով իր աղջիկը Բարբարան իր մանկության տարիներին հաճախ էր խաղում իր ընկերների հետ տիկննիկերով: Նա ստեղծեց գեղեցիկ ու հմայիչ տիկնիկին: Այսօր Բարբին շիկահեր, սևաչյա է, ունի հսկայական զգեստապահարան, զարդեր, կահույք և մեքենաներ: Ունի նաև քույրեր, եղբայրներ, ընկերուհիներ, նույնիսկ փեսացու: Նա հանդես է գալիս որպես երգչուհի, բուժքույր և այլ կերպարներով:
Այսօր Բարբին հայտնի է ողջ աշխարհում:

Ստեղծագործողների խումբ

Այս խմբի անդամները բանաստեղծներ, հեքիաթասացներ, ստղծագործ մարդիկ են: Առանց նրանց տիկնկների աշխարհում տխուր է լինում;

Բանաստեղծություններ մեր բանաստեղծներից

Ես ունեմ մի ծաղրածու
Քիթը՝ հավի ներկած ձու ,
Հագնում է նա փքված մի շոր,
Կոշիկներն են խոշո՛ր, խոշո՛ր:
Երբ նրա հետ ես խաղում եմ
Ուրախ-ուրախ ծիծաղում եմ:

Տիկնիկ ունեմ շատ խելացի,

Թողնեմ մենակ՝ նա չի լացի:

Ուր էլ տանեմ ցրտին, շոգին,

Ինչ էլ անեմ՝ չի բողոքի:

Իսկ հիմա ստեղծագործում են երեխաները

Փոքրիկ դույլով ջուր եմ բերում
ՈՒ մայրիկից օճառ խնդրում,
Տիկնիկներիս առած այսպես,

Լողացնում եմ մայրիկիս պես:

Էմիլի 2-րդ դասարան

Ախ իմ տիկնիկ

Իմ սիրոնիկ

Դու իմ փամփլիկ,
Իմ անուշիկ:

Մեծացել ես դու արդեն
Էլ չես ուզում ինձ լսել,
Չարացել ես դու արդեն
Վազում ես բակ ու փողոց:

Արփի 2-րդ դասարան

Մասնագիտական խումբ

Այս խմբի անդամները կոչվում են մասնագետներ, քանի որ երեխաները իրենք են պատրաստելու:
Պատրաստեցինք փայտե տիկնիկ և օգտագործեցինք մատիտ, թել, կտոր, ժապավեն:

Հաջորդ գործնական աշխատանքը թելից տիկնիկ պատրաստելն է:

Եզրակացություն

Այսպիսով, տարրական դասարաններում կիրառելով գործնական աշխատանք բաղադրիչը ձևավորում ենք այնպիսի կարևոր կարողություններ և հմտություններ, որոնք վերառարկայական են և պետք են աշակերտին ողջ կյանքի ընթացքում: Մասնավորապես սովորողները
զարգացնում են իրենց աշխարհաճանաչողական գիտելիքները,

ձեռք են բերում սոցիալական հմտություններ,

իրենց աշխատանքներում դիտարկում են տեսականի և գործնականի կապը,

ինքնադրսևորվում և ինքնակազմակերպվում են, ուսուցանվող առարկան դառնում է նրանց համար ավելի հետաքրքիր

լինում են մոտիվացված, քանի որ ամեն ինչ անում են իրենց նախասիրությունների շրջանակում և ներգրավված են համընդհանուր ուսումնական գործունեության մեջ:

Գրականություն

1.Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան <<Գործնական աշխատանքներ մայրենիից>>
2.Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան <<50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար >>: Մաս 1, <<Զանգակ>> հրատարակչություն, 2013թ.

3. Թամար Հայրապետյան, ՉԽՈՍԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԻ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ «ՍԱԲՐԻ ԽՐԾԻԳ» (ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԻԿՆԻԿ) ՀԵՔԻԱԹԱԽՄԲՈՒՄ, աղբյուրը՝ http://hpj.asj-oa.am/6205/1/91.pdf
4. ."История зарубежного театра", под редакцией проф. Г.Н. Бояджиева и проф. А.Г. Образцовой. Из-во "Просвещение",Москва,1981 г, стр. 72